ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Աշոտ Մանուկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պաշտոնակատար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Բեռլին (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն)/ 2018թ. ապրիլի 16-18-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ԳԴՀ տնտեսության և էներգետիկայի դաշնային նախարարություն և ԳԴՀ արտաքին գործերի դաշնային նախարարություն:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցել «Berlin Energy Transition Dialogue 2018» միջազգային համաժողովին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Պատվիրակությունը մասնակցեց «Berlin Energy Transition Dialogue 2018» միջազգային համաժողովի շրջանակներում անցկացված տարբեր ձևաչափերով քննարկումներին, շնորհանդեսներին՝ էներգետիկ անվտանգության ապահովման, տածաշրջանային համագործակցության ընդլայնման, էներգետիկ շուկաների փոխակերպումների, վերականգնվող էներգետիկայի թեմաներով: Ներկայացվեցին ոլորտների նորարարությունները, նորագույն տեխնոլոգիաները և զարգացումները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Այցի ընթացքում տեղի ունեցավ հանդիպում Եվրոպական ներդրումային բանկի փոխնախագահ Վազիլ Հուդակի հետ: Քննարկվեցին բանկի կողմից ՀՀ էներգետիկ համակարգում ֆինանսավորվող ծրագրերը՝ մասնավորապես «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ցանցային տնտեսության արդիականացման, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ենթակայանների նորացման, Շնող ՀԷԿ-ի կառուցման ծրագրերը:

Անդրադարձ եղավ նաև Հայաստան-Վրաստան 400 կՎ օդային գծի և այլընտրանքային էներգիայի կուտակիչ կայանների կառուցմանը ՀՀ կառավարության մոտեցումներին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել աշխատանքները Եվրոպական ներդրումային բանկի հետ ձևավորված համատեղ աշխատանքային խմբի շրջնակներում ներդրումային ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների
նախարարի պաշտոնակատար Ա.Մանուկյան